

**ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՐԱԶՅԱ ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ԱՎԱԳՅԱՆ ԼԱՌԻՐԱ ՄԱՐՏԻՆԻ

ՋԻՎԱՆՈՒ ՔՆԱՐԵՐԳՈՒԹՅԱՆ ԼԵԶՈՒՆ

**Ժ. 02.01- «Հայոց լեզու» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների
թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2012

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝

բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր
Լ. Կ. Եզեկյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր
Յու. Ս. Ավետիսյան

բանասիրական գիտությունների
թեկնածու
Ղ. Ղ. Մեսրոպյան

Առաջատար կազմակերպություն՝

Վանաձորի Հովհաննես Թումանյանի
անվան պետական մանկավարժական
ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2012 թ. դեկտեմբերի 3-ին՝ ժամը 15⁰⁰-ին, ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտում գործող ԲՈՂ-ի 019 լեզվաբանության մասնագիտական խորհրդում (հասցեն՝ Երևան 0015, Գրիգոր Լուսավորչի 15):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2012 թ. նոյեմբերի 2 – ին:

Մասնագիտական խորհրդի գիտ. քարտուղար,
բանասիրական գիտությունների
թեկնածու, դոցենտ՝

Ն.Մ. Սիմոնյան

Ատենախոսության ընդհանուր բնութագիրը

Գրողի լեզուն և ոճը՝ որպես նրա մտածողության դրսևորման արտաքին ձևեր, անհատական բնույթ են կրում: Այդ է պատճառը, որ յուրաքանչյուր գրող բնութագրվում է իրեն հատուկ լեզվով և ոճով: «Ստեղծագործության լեզուն և ոճը ընտրության արդյունք են, հեղինակին անհատականացնող կարևոր գործոններ, ուստիև յուրաքանչյուր հեղինակ (իհարկե խոսքը վերաբերում է որոշակի տաղանդ ու ճանաչում ունեցող հեղինակներին) ունի միայն իրեն հատուկ լեզու և ոճ: Մյուսներից տարբերվում է ոչ միայն իր ստեղծագործական վարպետությամբ, գեղագիտական ճաշակով, այլև բառապաշարի, քերականական կառուցվածքի ու արտահայտչական միջոցների օգտագործման յուրահատկություններով»¹:

Գրողի ստեղծագործության լեզվի ուսումնասիրություն կատարելիս ելակետ պետք է ընդունել այն դրույթը, որ բոլոր գրողների լեզվի հիմքը նույն համաժողովրդական լեզուն է, սակայն լեզվի դրսևորման ձևերն անհատական են: Հետևաբար «խոսել գրողի լեզվի մասին, նշանակում է խոսել ոչ միայն ընդհանուրի մասին, որով նա մոտենում է գրչակիցներին, այլև ցույց տալ այդ ընդհանուրի, այսինքն համաժողովրդական լեզվի օգտագործման յուրահատկությունը»²:

Թեմայի արդիականությունը: Այսօր շատ է խոսվում ազգային-ժողովրդական և աշուղական երգարվեստի տարածման և զարգացման անհրաժեշտության մասին: Այդ համատեքստում հանրային հաղորդակցության միջոցներով հաճախակի ունկնդրում ենք հայ անվանի աշուղների, այդ թվում նաև Ջիվանու երգերը: Սակայն եթե երգարվեստի տեսանկյունից Ջիվանու ստեղծագործությունները շատ թե քիչ ուսումնասիրված են, ապա նույնը չենք կարող ասել նրա ստեղծագործություններին նվիրված լեզվաբանական ուսումնասիրությունների վերաբերյալ: Առ այսօր չկան ամբողջական ուսումնասիրություններ, որոնք բացահայտում են Ջիվանու լեզվական առանձնահատկությունները: Ուսումնասիրված չեն նրա քնարերգության բառապաշարը, քերականական և շարահյուսական կառույցները, պատկերավորման և արտահայտչական միջոցների համակարգը, բացահայտված և լեզվագիտորեն զնահատված չեն նրա լեզվի ոճական առանձնահատկությունները:

Ջիվանու ստեղծագործություններն աչքի են ընկնում բառապաշարի հարստությամբ, կրկնությունների յուրահատուկ կառուցվածքներով, իմաստաբանական տեսանկյունից առանձնահատկություններ պարունակող ինքնատիպ հարադրություններով, դարձվածքներով, ասացվածքներով, թևավոր արտահայտություններով, որոնց ոճագիտական ուսումնասիրությունը նույնքան արդիական է, որքան և այդ ստեղծագործությունները՝ որպես աշուղական երգարվեստի նմուշներ, հետազոտելը:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Ուսումնասիրության նպատակն է վերհանել այն առանձնահատկությունները, որոնք հատուկ

¹ **Լ. Եզեկյան**, Բաֆֆու ստեղծագործությունների լեզուն և ոճը, Եր., 1975, էջ 103:

² **Մ. Ավագյան**, Նաիրի Ջարյանի ստեղծագործության լեզուն և ոճը, էջ 5:

են Ջիվանու քնարերգության լեզվին և տալ դրանց լեզվաոճական բնութագիրը: Այդ համատեքստում խնդիր է դրվել:

1. բացահայտել Ջիվանու գեղարվեստական խոսքին հատուկ լեզվական այն առանձնահատկությունները, որոնք պայմանավորված են նրա բառապաշարով,
2. ուսումնասիրել Ջիվանու լեզվի պատկերավորման և արտահայտչական միջոցների համակարգը, վերլուծել և բացահայտել նրա ստեղծագործություններում առկա փոխաբերությունների, համեմատությունների, մակդիրների, զուգադրությունների, հակադրությունների, կրկնությունների ոճական այն առանձնահատկությունները, որոնք գեղարվեստականացնելով նրա խոսքը՝ բնութագրում են հեղինակին՝ որպես գրողի,
3. առանձնացնել և վերլուծել Ջիվանու ստեղծագործություններում առկա լեզվական այնպիսի իրողություններ, որոնք աչքի են ընկնում հեղինակային-տիպաբանական յուրահատկություններով և բնութագրում են Ջիվանի ստեղծագործողի անհատական լեզվամտածողությունը:

Յետազոտության մեթոդները: Յետազոտությունը կատարվել է նկարագրական, կառուցվածքային և պատմահամեմատական մեթոդների գործադրմամբ: Ջիվանու խոսքում առկա լեզվական որոշ եզրույթների ոճաբանական առանձնահատկությունների բացահայտման, դրանց դասակարգման և ձևականացման (մասնավորապես՝ նշանային համակարգերի միջոցով գծապատկերման) հարցերը քննելիս կիրառվել են համեմատության, վերլուծության, համադրության, վերացարկման և ընդհանրացման ձևատրամաբանական հնարներ:

Ուսումնասիրության գիտական նորույթը: Ուսումնասիրության գիտական նորույթն այն է, որ առաջին անգամ համակողմանիորեն, համակցված և համակարգված են ներկայացված են Ջիվանու լեզվական առանձնահատկությունները, բացահայտված և դասակարգված են նրա ստեղծագործությունների տաղաչափական այնպիսի օրինաչափություններ, որոնք ընդհանրական չեն աշուղական ժանրում ստեղծագործած այլ հեղինակների համար: Վերլուծության են ենթարկված նրա բառապաշարը և գեղարվեստաարտահայտչական միջոցների համակարգը: Իմաստաբանական տեսանկյունից վերլուծված, մեկնաբանված և արժևորված են նրա լեզվամտածողությանը բնորոշ քերականական և շարահյուսական որոշ կառույցների ոճական առանձնահատկություններ ևս:

Ուսումնասիրության տեսական և գործնական նշանակությունը: Ջիվանու ստեղծագործություններն օժտված են աշուղական քնարերգությամբ բնորոշ ձևակառուցվածքային (հիմնականում տաղաչափական) ընդհանրական առանձնահատկություններով: Դրանք աչքի են ընկնում նաև իրենց խորիմաստությամբ, գեղարվեստական բարձր արժանիքներով, ինքնատիպ լեզվաոճական առանձնահատկություններով, որոնք սույն հետազոտությունն իրականացնելու պատճառ են դարձել:

Աշխատանքի տեսական և գործնական նշանակությունն այն է, որ կարող է նպաստել ոչ միայն Ջիվանու խոսքարվեստին նվիրված լեզվաբանական ուսումնասիրությունների հետագա ծավալմանը, այլև ողջ հայ աշուղական բանահյուսությանը նվիրված լեզվագիտական տարատեսակ ուսումնասիրությունների նախաձեռնմանն ու իրականացմանը: Այն կա-

րող է օգտակար լինել ինչպես առանձին գրողների լեզվական մշակույթին վերաբերող ոճագիտական հեռագոտություններ իրականացնող լեզվաբանների, այնպես էլ Ջիվանու բանաստեղծական արվեստով հետաքրքրվողների համար:

Աշխատանքի փորձարկումը: Գիտական ժողովածուներում և հանդեսներում տպագրվել է առենախոսության թեմային վերաբերող 7 հոդված: Հետազոտության արդյունքների վերաբերյալ ներկայացվել են զեկուցումներ՝ 3 միջբուհական և 1 միջազգային գիտաժողովներում:

Առենախոսության կառուցվածքը: Առենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլխից (համապատասխանաբար 6 և 3 մասերով), եզրակացությունից, համառոտագրությունների և օգտագործված գրականության ցանկերից, երկու հավելվածից: Առենախոսության ընդհանուր ծավալը 155 համակարգչային էջ է:

Առենախոսության բովանդակությունը

Ներածություն: Ներածական մասում տրվում է Ջիվանու լեզվի ընդհանրական բնութագիրը, հիմնավորվում նրա լեզվաոճական առանձնահատկությունների ուսումնասիրման անհրաժեշտությունը: Արժևորված է այն անգնահատելի ներդրումը, որն ունեցավ Ջիվանին ազգային-աշուղական լեզվի հայացման և ժողովրդայնացման գործում:

Գլուխ առաջին: Ջիվանու բառապաշարը: Ջիվանու բառապաշարի քննությունը կատարելիս կարևորել ենք բառերի ոճաբանական արժեքը՝ անկախ այս կամ այն բառաշերտին դրանց պատկանելությունից: Նման մոտեցումը պայմանավորված է նրանով, որ բառը այս կամ այն բառաշերտին դասելու խնդրի լուծումը, ըստ մեզ միարժեք չէ, մանավանդ եթե համարում ենք, որ «...գրական լեզուն հանդես է գալիս այն պահից, երբ բանավոր լեզուն ոչ թե սոսկ գրի է առնվում, այլ գրի է առնվում գրական մշակման ենթարկվելով»³:

Համագործածական բառերի ոճական դրսևորումները: Համագործածական բառերի միջոցով Ջիվանին փոխաբերական իմաստով է օժտել իր խոսքը և դարձնելով այն բազմիմաստ՝ կարևորել է զուգորդումներ առաջացնելու խնդիրը: Այս դեպքում խոսքը սեղմ է, ուղեկցվում է զեղչումներով, և որպես պատկերավոր մտածողության տեսակ՝ նրանում գերիշխում է զուգորդային մտածողությունը: Այդ փաստն առավել ցայտուն է դրսևորվել հատկապես Ջիվանու այլաբերական խոսքում, որը հաճախ ուղեկցվում է դարձվածքներով, ասացվածքներով, առածներով, և որոնցում համագործածական բառերի զգալի մասը գործածված է փոխաբերական իմաստով: Միևնույն համագործածական բառը, կապակցվելով այլ բառերի հետ (հատկապես մակդիրային կապակցություններում), վերափոխվելով է և իր նոր՝ փոխաբերական իմաստի շնորհիվ վերածվել խորհրդանշի: Այդպիսին են հատկապես այն համագործածական բառերը, որոնք անվանում են բնության առարկաներ ու երևույթներ, բույսերի ու կենդանիների տեսակներ, գույներ: Օրինակ՝ «Ծիրանի ծառ» բանաստեղծության մեջ հարակցելով *ծառ* գոյականը այլ խոսքի մասերի հետ՝ ձևավորել է *ծիրանի ծառ* - *արևելյան ծառ* - *չորս հազար տարվա ծառ* -

³ Է. Աղայան, Լեզվաբանության ներածություն, Եր., 1952, էջ 58:

հայկական ծառ չորս տարբեր հասկացություններով կառուցված տրամաբանական շղթան, որի արդյունքում ծիրանի ծառը վերածվում է խորհրդանշի՝ «հայկական ծառի»: Բազում են միևնույն իմաստով գործածված տարբեր հանագործածական բառերը: Այդպիսիք են *«Անհայրենիք, թափառական ազգի վերջը շատ վատ է// Ուրբերու տակ հող չունի, շինածը անհաստատ է»*⁴, *«Այլոց տվիք ձեր վեհ տունը...»* (Ջե, 56), *«...Գնա, հայի բլբուլ, քո տեղդ երգե»* (Ջե, 75), *«Ա՛յս իմ երկիր, անուշ երկիր հայրական // Պապիս, մամիս, մախնիքներուս օթևան»* (Ջե, 64) բանատողերում գործածված *հող, տուն, տեղ, երկիր* բառերը, որոնք հայրենիքի իմաստ են արտահայտում:

Առօրյա-խոսակցական լեզվում գործածվող բառերը Ջիվանին օգտագործել է երևույթը տարբեր կողմերով ներկայացնելու, համեմատություններ ու հակադրություններ կառուցելու համար, որն ասելիքը պարզ ձևով ներկայացնելու, ապրածն ու զգացածը պատկերավոր վերարտադրելու միջոց է դարձել: Երևույթներն առավել պատկերավոր ներկայացնելու համար զուգահեռներ է անցկացնում ելակետային հասկացության և իր պատկերացումներով նրան համարժեք այլ հասկացությունների միջև՝ հարակցելով դրանք տարբեր խոսքի մաս հանդիսացող համագործածական այնպիսի բառերի հետ, որ կառուցվող մակդիրների միջոցով նկարագրվող հասկացությունը ներկայացվի բազմակողմանիորեն, իր ողջ խորությամբ (*«Ժանտախտից, վատ ցավքից ահռելի ցավ ես// Տգեղ ու տաղտկալի սև պարսպություն//...Սողորության աղբյուր ես, չարության մայր ես//...Գործող մարդկանց համար ժանտ ես, դաժան ես//...Անուտք, անծեռք մարդին հաստատ նման ես»*⁵):

Բարբառային, ժողովրդախոսակցական, գրական բառաշերտերը: Ժամանակաշրջանի շատ գրողների նման Ջիվանին ևս օգտագործել է գրաբարայնություններ, արևելահայ և արևմտահայ ժողովրդախոսակցական ու բարբառային ձևեր: Նրա խոսքում միածուլված են ժողովրդախոսակցական և գրական-զեղարվեստական լեզուները: Թեմայով և իրադրությամբ պայմանավորված՝ Ջիվանին հավասարապես գործածել է թե՛ բարբառային, թե՛ գրական բառեր, օգտագործել ժողովրդական խոսքին հատուկ լեզվատարրեր: (*«Յուրթ որդունքն է ծծում...»*) (Ջե, 35): *«Դուն ես որբաց և աղքատաց պահպանող...»* (Ջե, 69): *«Ոչ որ չէ հասկանում, ոչ որ չէ լսում...»* (ՋԱե, 57): *«Սողվե հայոց լեզուն քաղցրիկ...»* (Ջե, 41): Հանդիպում են այնպիսի իրողություններ, երբ միևնույն բանաստեղծության մեջ խիստ գրական ոճով ու բառերով ձևակերպված հատվածին հաջորդում է ժողովրդախոսակցական և բարբառային լեզվատարրերով ուղեկցվող հատված, կամ բանաստեղծության հատվածը կառուցվում է միաժամանակ և՛ գրական, և՛ ժողովրդախոսակցական բառաշերտերին պատկանող բառերի ու բառաձևերի միջոցով: Ասվածի օրինակ է «Չոգս» բանաստեղծությունը, որում ընդհանրական իրավիճակ պատկերող, հակիրճ, խիստ գրական ոճով ու բառերով ձևակերպված առաջին տանը (*«Ժամանակը*

⁴ **Ջիվանի**, Երգեր (այսուհետ՝ **Ջե**), (առաջաբանը գրեց, տեքստը կազմ. և ծանոթագր. Ա. Վ. Սահակյանը), Եր., 1988, էջ 37:

⁵ **Ջիվանի**, Անհայտ երգեր (այսուհետև՝ **ՋԱե**), (աշխատասիրությամբ Թովմաս Պողոսյանի), Եր., 1996, էջ 54:

շռայլ է խիստ// Պահանջը շատ, վաստակը քիչ// Մարդկանց դեմքը մռայլ է խիստ// Գրպաններում ստակը քիչ») հաջորդում են բարբառային և ժողովրդախոսակցական լեզվատարբերով ձևակերպված քառատողերը («Մարդու գորպանում փո՞ղ չկա// Կինը հալավ գուլզե թագա// Այս ջրով ջրադաց չի դառնա// Ելճում է արվակը քիչ// Շվարել են խեղճ մարդ ու կին// Իրանք աղքատ և բազմածին// Ի՞նչ վայ տա մայրը յուր գլխին// Որդիքը շատ, խորակը քիչ»): Այս ամենը Ջիվանին մատուցում է խիստ պատկերավոր ձևով՝ կառուցելով հակադրություններ, համեմատելով խոսքը հարադրություններով, դարձվածքներով, բնածայնական բառերով:

Ջիվանին վարպետորեն է օգտագործել բառերի բազմիմաստությունը: Նա ոչ միայն գործածել է բառերն իրենց հոմանշային տարբերակներով, այլև որոշ դեպքերում բառերին տվել է նոր իմաստներ, գտել բառերի նոր կիրառություններ, ստեղծել նոր բառեր: Նրա խոսքում հանդիպում են այնպիսի կառույցներ, որոնցում կողք կողքի հանդես են գալիս մոտ իմաստ արտահայտող երկու և ավելի հոմանիշ բառեր («Պարտապ, անգործ, ձրիակեր, անառակ խմբակի ձեռքից// Բանավոր մարդիկը փոխվել, անասուն, անբան են դարձել// Գռող, գռփող, հափշտակող, գիշատող գազան են դարձել» (ՋԵ, 118)). դրանք նաև գործողությունը աստիճանավորելու, ուժգնացնելու նպատակ են հետապնդում: Խոսքն է՛լ ավելի պատկերավոր դարձնելու նպատակով մակդիրներ ու համեմատություններ է կառուցել, գործածելով ոչ միայն գրականացված, այլև ժողովրդախոսակցական տարբերակներ: Քիչ չեն այնպիսի խոսքային իրադրությունները, որոնցում բառերի իմաստային ընդլայնումը պայմանավորված է այդ իսկ բառերի փոխանվանական գործածությամբ («Ունիս փայլուն ծրագներ շատ// Մշտապես վառերուդ մատաղ// ...խորհախորհուրդ, միշտ գերբնական // Մութ, մռայլ մառերուդ մատաղ» (ՋԵ, 74)):

Ջիվանու խոսքում հանդիպող բարբառային քերականական և շարահյուսական ձևերի ու կառուցվածքների հիմնական մասը բնորոշ են «կը» ճյուղի, մի մասն էլ՝ «ուն» ճյուղի բարբառներին: Մասնավորապես՝ սեռական-տրականի հոլովածները, բացառականի հոլովածները, տեղի կապերի **ը** հոդով գործածումը, սահմանական եղանակի անկատար ներկա և անկատար անցյալ ժամանակային ձևերում բայերի խոնարհումը **կ** (զուգահեռաբար **կը** կամ **կու**) մասնիկով, ներկա անկատարի ժխտական ձևերը, բայերի անցյալ կատարյալի ոչ ցոյական ձևերը, որոշ բայածներում **վ** կրավորական ածանցի բացակայությունը, հրամայականի և արգելական հրամայականի ձևերը, վաղակատար անցյալի, անցյալ կատարյալի ժամանակային ձևերը, ըղձական ապառնի և պայմանական ապառնի ժամանակային ձևերի երրորդ դեմքի եզակի թվում **ի** վերջավորության փոխարեն **ե** վերջավորությունը, որոշյալ հոդի զեղչումները, գոյականի՝ տրական, ներգոյական հոլովներով գործածության փոխարեն, ուղղական հոլովով գործածությունը, բառերի հնչյունափոխված ձևերը:

Պնաբանությունները, փոխառությունները, օտարաբանությունները, նորակազմությունները և դիպվածային բառերը: Շատ հնաբանություններ, որոնք գործածվում էին ժողովրդախոսակցական լեզվում ժողովրդի կենցաղը անվանելու, բարբերն ու սովորությունները նկարագրելու նպատակով, տեղ են գտել նաև Ջիվանու ստեղծագործություններում: Դրանցից են պատմաբառերը, որոնք օգտագործված են խոսքը պատկերավոր և արտահայտիչ ձևակերպումներով մատուցելու նպատակով: Օրինակ, «Ով յուր ազգը ուրանա// Երկու աշ-

քով կուրանա// ...Կշտին դիպչի գեղարդը // Մրտից թափի լյարդը // Դժոխքի բռնցկելիք// Լիճի ազգուրաց մարդը» (Ջե, 51), «Շքից վախճեցող զինվորին// Դրացան, ասպարն ի՞նչ անե //...Փայտին ոստոտ և անախտան // Դյունսի սուր տասպարն ի՞նչ անե» (Ջե, 70), որոնցից առաջինը ժողովրդախոսակցական լեզվով և բանաստեղծական ոճով արտահայտված անեծք է, իսկ երկրորդը՝ ասացվածքի ձևով ներկայացված դատողություն:

Ջիվանու բանաստեղծությունները հարուստ են պատմական դեմքերի անուններով, որոնք ևս կարելի է դասել պատմաբանների շարքը այն հենքով, որ նրանցից յուրաքանչյուրի անվան հետ զուգորդվում է պատմական ինչ-որ մի դիպված: Սրանք՝ որպես դրական կամ բացասական խորհրդանիշներ, դարձել են այս կամ այն շրջասության, դարձվածքի, ասացվածքի, թևավոր արտահայտության բաղադրիչ և նպաստել գեղարվեստական խոսքի ոճական երանգավորմանը: Պատմաբաններ կարելի է համարել նաև նրա բանաստեղծություններում հանդիպող հունահռոմեական կամ հայկական դիցաբանության, աստվածաշնչյան կերպարների, հայ ազգային հերոսների անունները, հին տեղանունները, որոնց գործածությամբ Ջիվանին փորձել է իր դատողությունները դարձնել առավել համոզիչ և ազդեցիկ:

Ջիվանու բանաստեղծություններում զգալի թիվ են կազմում հատկապես ձևական-ձևաբանական և բաղադրական հնաբանությունները: Դրանցից են, օրինակ, *վարդոց, օրորան, այց անել, ջոկ-ջոկ, արարմունք, ցանկալ, անկանել, մեռանել* բառերն ու բառաձևերը, որոնց ներկայիս ձևերում փոփոխության է ենթարկված կամ հնչյունական կազմը, կամ ձևաբանական կառուցվածքը, կամ բաղադրության տեսակը: Հատկապես բաղիյուսական հարադրություններում՝ որպես երկրորդ բաղադրիչ, Ջիվանին երբեմն գործածել է բառերի հնացած տարբերակներ (*այս ու ծանակ, կեծ ու պատիր, լաց ու կական, կարաս ու բրուռ, ջահ ու դամբար, տանկ ու տնագ, ազգ ու ազինք, խենթ ու խենեշ*): Բառային հնաբանությունների մի մասը (*չվառ, պտրել, սարսել, անզրավ, բանբառակ, կապուտ, վատշվեր, կամակ, պատերազմիկ, բազմակամ*) գրաբարյան ծագում ունեն և օգտագործված են բանաստեղծությունների թեմային ու բովանդակությանը համապատասխան: Ոճականորեն առավել նշույթակիր են այն հնաբանությունները, որոնք ուղեկցվում են գեղարվեստաարտահայտչական միջոցներով: Սրանց կազմում հանդիպում են գրաբարաբանություններ, որոնք հեղինակային խոսքն առավել հնաոճ են դարձրել («*Օգնությունը մերազնյաց վերացել է բոլորովին// Մեր հույսը դու ես միայն, ով դու անմահ միածին*» (Ջե, 45): «*Ե՛րբ կփոխեն երզը ուրախ կարդալու// Քո սզագզյաց տխակներդ, Հայրենիք*» (Ջե, 62)): Ուշագրավ են նաև գրաբարյան բառային ու քերականական այն ձևերը, բառակապակցություններն ու դարձվածքները, որոնց մի մասին՝ որպես խոսքին վսեմություն ու հնատիպություն հաղորդող միջոցների, այսօր էլ կարելի է հանդիպել գեղարվեստական կամ հրապարակախոսական ոճերում:

Իմաստային հնաբանությունները շատ չեն և պայմանավորված են ժամանակի ժողովրդախոսակցական լեզվում դրանց առօրյա գործածականությամբ և ժողովրդի առարկայական մտածողությունն արտահայտող դրսևորումներով (օրինակ՝ *ոտավոր* - հետիոտն, *աշխատություն* - նեղություն, խոնջանք, չարչարանք, *համարում* - հեղինակություն, հարզանք, *համեմատ* - հավասար, համաձայն, ըստ, *բանավոր* - բանական, մտածող, խոսող, բանական արարած, *ան-*

բան - չխոսող, անխոս, գունարվել - միաբանվել, համախմբվել, խմբավորվել, գունար-գունար - խումբ-խումբ, գործավար - որևէ գործի վերակացու, կառավարիչ):

Փոխառությունների և օտարաբանությունների առկայությունն ամբողջապես պայմանավորված է ժողովրդական խոսքում (հատկապես բարբառներում) դրանց գործածականությամբ: Սրանց մի մասին կարելի է հանդիպել այսօր էլ՝ խոսքային տարբեր ոճերում (*խաթուն, դալան, շամանդաղ, արնադան, յաղութ, հալավ, շահապրամ, դուշման, էլօղլի, դավամդալ, ֆարֆոր, ֆար, շլապա, բարուշկա*): Ունի նորաբանություններ (*նորահույս, հոգեօգուտ, գաղտնագետ, ավետալուր*), որոնց զգալի մասը ճիշտ կլինի դասել հեղինակային նորակազմությունների շարքը: Դիպվածային բառերի մի մասը ստեղծված է նմանողության, նմանահնչյունության, վանկերի քանակի պահպանման, հատածների դիրքային համապատասխանեցման նկատառումներից ելնելով և չի համապատասխանում հայոց լեզվում բառակազմության ընդհանուր կանոններին ու տրամաբանական մեխանիզմներին. դա նույն վերջավորությունն ունեցող բառերի համատեքստում արհեստական հարմարեցման տպավորություն է թողնում և կարող է դիտվել որպես լեզվական շեղում (*«Կեղծ ու պատիր հնչողին// Կատվի պես մռնչողին...»* (Ջե, 51), *«Ինչ ունեիր թափեցիր մեզի վրա գայրացուր...»* (Ջե, 85)):

Հարադրական բարդությունները: Ջիվանու բանաստեղծություններն առատ են հարադրական և կրկնավոր բարդություններով: Անվանականների և կրկնավորների շարքում գերակշռում են գոյականական և ածականական հարադրությունները, որոնց բաղադրիչները հարաբերակցվել են իմաստների առնչակցության, հոմանշության կամ հականշության հենքի վրա և ընկալվում են որպես սաստկականություն, հավաքականություն կամ ամբողջականություն, բաշխականություն, բազմակիություն, բազմազանություն կամ անորոշություն, քնքշություն կամ փաղաքշանք, նվազականություն արտահայտող միասնական բառային միավորներ: Ըստ կապակցման եղանակի՝ գերակշռում են շաղկապական հարադրությունները (հարակցականներն անհամեմատ քիչ են սրանցից):

Անվանական հարադրությունների մի մասն իր փոխաբերական իմաստի շնորհիվ խորացնում և ընդհանրացնում է միտքը՝ ստիպելով ըմբերցողին երևակայության մեջ նտապատկերներ կառուցել: Անվանական հարադրություններին զուգահեռ՝ գործածված են նկարագրությունն առավել գեղարվեստականացնող ածականներ, որոնք ոչ միայն սաստկացնում, այլև գեղագիտական հմայքով են օժտում պատումը (*«...Փայլուն, գեղեցիկ աստղերը անկյուններ մտան// Ո՞ւր է լուսինը, չի երևում, չի գա երևան// ...երկինքը հոգուս մութ ու մռայլ թուխպեր է առել// ...Առվակի փարոզ նունուֆարը իզուր ու նանիր// Ի՞նչու է տխուր, ի՞նչ է եղել, թոշնել է այդքան...»* (Ջե, 143)): Հանդիպում են այնպիսի անվանական հարադրություններ, որոնցում բաղադրիչներից մեկն ընդհանուր է, իսկ երկրորդը համադաս է առաջինին և իմաստով ուղղակի կամ միջնորդավորված ձևով նրա հետ կապված, որի շնորհիվ բարդությունը կամ սաստկական, կամ ընդհանրացնող իմաստ է ձեռք բերել: Արդյունքում հարադրությունն ամբողջությամբ պատճառահետևանքային կապով միավորված մեկ զուգորդային հարաբերություն է ցույց տալիս, որի իմաստն առավել հարուստ ու ընդհանրական է, քան բաղադրիչներինը առանձին-առանձին վերց-

րած («Օձն էլ ոգնու ձեռքից միշտ լաց ու կական// Անելով մեռնում է, անճար ու անդեղ» (Ջե, 183), «Ցավոց պետը խլեց բարի կենցաղս// Սուգ ու լացի փոխվեցավ իմ ծիծաղս»⁶, «Սեռա, նպատակիս չհասած իզուր// Տխուր ու խեղճ եղավ վերջս-վախճանս» (ԱՋԱԵ, 344)):

Ոճականորեն ուշագրավ են այնպիսի բարդությունները, որոնք առաջին հայացքից կարծես թե չեն կարող ընկալվել որպես բառային մեկ միավոր և համարվել հարադրություն: Եթե դրանք առանձնացնում ենք խոսքաչափից և ձևականորեն դիտում որպես **և** կամ **ու** միավորող շաղկապներով բառակապակցություններ, ապա թվում է՝ թվարկման իմաստ արտահայտող լեզվական միավորներ են: («Ա՛խ, իմ պարտեզ, պտղատու ծառերդ թառամեցան//... Կարկուտը, քրիեղեղը քեզ դարձուցին ավերակ// ...Ամեն օր մուկ ու մորեխ, երաշտ ու սով ու կրակ// Վիթխարի կաղնիներդ վայր ընկան, չդիմացան» (Ջե, 72), «Մաստկանձունչ հողմի նոր դղրդյունից// Հուր ու ծծումբ ժայթքեց ամեն անկյունից// Երկրային շարժումից, գոռում-գոշյունից» (Ջե, 169)): Օգտագործել է ժողովրդի լեզվամտածողությանը հատուկ կրկնավոր բարդություններ և այնպիսի բառեր, որոնց նշանակությունը համահունչ է գործածված հարադրությունների նշանակությանը, և որոնք համալրում են խոսքաշարում առկա միևնույն իմաստաբանական դաշտին պատկանող բառերի շարքը: Որոշ կրկնավորներ էլ, մեկ այլ հարադրության մաս կազմելով (հիմնականում բայական), վերջիններիս դարձվածքային երանգ են հաղորդել («Էլ մեզ չմնաց համբերելու ուժ, չափ ու սահման// ...Վառվիք գոնե դուք, լուսատու լապտեր, ցոհ ու դամբար» (Ջե, 134): «...Բազում մասերու բաժանված, կերպ-կերպ, զանազան ես արհեստ» (Ջե, 233): «Ձեռք-ձեռքի տանը, խոհեմ լինենք, հարգենք մեր երկրի շահը» (Ջե, 159): «Երբ որ մի մարդ ուրախ չէ// Եռանդով չի աղոթում// Որովհետև հաց պետք է// Փողը վեց-վեց է անում» (ԱՋԱԵ, 242)):

Առավել հետաքրքրական են Ձիվանու բայական հարադրությունները, որոնց զգալի մասը ժողովրդախոսակցական լեզվում տարածված և հայ մարդու լեզվամտածողությանը բնորոշ դարձվածքային արտահայտություններ են: Միևնույն բայական հարադրությունն օգտագործել է տարբեր նշանակությամբ. մի դեպքում՝ զուտ միաբառ զուգահեռի, մի այլ դեպքում, ընդարձակելով հարադրության իմաստը, վերածել է այն դարձվածքայինի: Երբեմն էլ կառուցվածքային առումով միևնույն դարձվածքային հարադրությունն է գործածել տարբեր իմաստներով («Ման եմ գալիս գժվածի պես, ձեռս ծոցս, խեղճ ու շվար» (Ջե, 63), «Որսկանը ճրագով քեզի ման կուգա...» (Ջե, 63), «Մեզանից ձեռք քաշեց հզոր արծիվը» (Ջե, 38), «Պայմանիդ ձեռք քաշեցիմ յոթ անկախ թագավոր» (Ջե, 60)): Ուշագրավ են նաև այն բայական հարադրությունները, որոնցում՝ որպես միևնույն իմաստն արտահայտող վերլուծական բաղադրություններ, համընկնում է կամ հարադրյալը, կամ հարադիրը (վար ընկնել-ցած ընկնել-վայր ընկնել, ձեռքն առնել - վեր առնել, պար գալ- պար բռնել- պար խաղալ): Սրանցից յուրաքանչյուրն ունի իմաստային իր նրբերանգը, որը պայմանավորվում է նաև զուգահեռ գործածված այնպիսի բառերով ու բառակապակցություններով, որոնք՝ որպես լրացում կամ լրացյալներ, կարող են ոչ միայն նախանշել հարադրության տվյալ իմաստը, այլև որևէ արտահայտչա-

⁶ **Ձիվանի** (Աշուղ Ձիվանի), Անհայտ երգեր, Աշխատասիրությամբ Թ. Պողոսյանի, «Լուսակն» հրատ., Երևան, 2009, էջ 221 (այսուհետ՝ ԱՋԱԵ):

միջոցի մաս կազմելով՝ որոշակիացնել այն (*«Ես մի գեպիյուն լինելի, մագերուդ հետ խաղայի// Կամ մի թռչուն գեղեցիկ՝ ձեռքերուդ մեջ պար գայի»* (ԱՋԱԵ, 220): *«Սեղը յուր մեռելը կուլա//...Մի ուրիշը պար կը խաղա»* (ՋԵ, 200):

Ջիվանին զուգաբայական հարադրություններ է ձևավորել բայական այնպիսի բաղադրիչներից, որոնք կամ համանման, կամ մերձակից գործողությունների նշանակություն ունեն (*«...Ապրեք տկարը և չնձալ, ուժ տվեց աստված»* (ՋԵ, 158): *«Իմ յարս ռունդ կաքավ է//...խոտող-զոցող, համ լեզվանի»* (ՋԵ, 487): Կան զուգաբայական հարադրություններ, որոնք բաղադրիչները թեև իմաստներով հոմանիշներ չեն, «սակայն արտահայտում են այնպիսի գործողությունների գաղափար, որոնք իրականության մեջ կապված են միմյանց հետ կամ իրենց բնույթով, կամ էլ մի ավելի ընդհանուր գործողության տարբեր հատվածներն են և այդպիսով լրացնում են միմյանց ու մի ամբողջություն կազմում»⁷ (*«Երկիրը մենք վարենք-ցանենք//...Ագահները խլեն տանին»* (ՋԵ, 220): *«Ստածե խելքովդ, ձև և չափե»* (ՋԵ, 390)):

Ինչ վերաբերում է Ջիվանու դարձվածքային հարադրություններին (*զաղափարին հարմար գալ, կյանքը տալ, ցավ ծարել, կաղ ու ծուռ շլինք լինել, հուղա լինել, խորհուրդ լուծել, գլխից անցնել, անկյուն քաշվել, ճամփից հանել, տանկ ու տնազ անել, սրտին դանակ դնել, կամ ու կաս (կաց) անել, Պիղատոսի վճիռ տալ, ատամին խփել, ցեց ընկնել, գառան մորթի առնել, տիկ դառնալ և ուրիշին դարձնել բերան*), վստահաբար կարող ենք ասել, որ սրանց մի մասը՝ որպես նրա անհատական մտածողությունը բնութագրող ինքնատիպ լեզվական միավոր, կարող է համարվել հեղինակային և համալրել հայոց լեզվի դարձվածքային արտահայտությունների ցանկը:

Գլուխ երկրորդ: Պատկերավորման և արտահայտչական միջոցները Ջիվանու չափածոյում: Ջիվանու խոսքն իր ներգործման շնորհիվ մտել է ժողովրդական լեզվամտածողության և հոգեբանության մեջ: «Ջիվանու երգերն ու բանաստեղծությունները... գաղափարական ու գեղարվեստական որոշակի արժանիքներով օժտված հոյակապ կերտվածքներ են, որոնց մեջ ժողովուրդը տեսել և տեսնում է իր կյանքի արտացոլքը, իր մտքերի ու զգացմունքների, հույսերի ու ձգտումների բարձր արտահայտությունը»⁸: Նա իր տեսածը և զգացածը բանաստեղծության ու երգի միջոցով այնքան պարզ, մատչելի ու պատկերավոր է ներկայացրել, որ դրանցում արտահայտված մտքերի զգալի մասը՝ որպես դարձվածքներ, առակներ, ասացվածքներ ու թևավոր արտահայտություններ, այսօր էլ հնչում են ժողովրդական խոսքում:

Այլաբերական համակարգը: Ջիվանու բանաստեղծությունները հարուստ են ինչպես համառոտ, այնպես էլ ծավալուն համեմատություններով: Ըստ համեմատություն ձևավորող բաղադրիչների կապակցման տեսակի՝ հանդիպում են *մնան, պես, գերթ, որպես, ինչպես, կարծես, հանց* և այլ կապական բառերով շարակցվող միացություններ (*«Քայլքդ կաքավի պես քնքույշ, հայ աղջիկ // ...Պտույտ գալի անմեղ աղավնվո մնան»* (ՋԵ, 241)): Ձևի կապերով կառուցված համեմատություններում համեմատյալը բնորոշում է եմթական անմիջականորեն, և տեղի է ունենում նմանության հատկանիշի ոչ միջնորդավորված բացահայտում: Համեմատությունների կազմություններում երբեմն

⁷ Ա. Աբրահամյան, Բայը ժամանակակից հայերենում, Գիրք 1, Եր., 1962, էջ 195:

⁸ Ս. Մուրադյան, Գրական հանգրվաններ, Գիրք Ա, Երևան, 2003, էջ 93:

բացակայում է այն հատկանիշը, որի հիման վրա կատարվում է համեմատումը (երկանդան համեմատություն), իսկ համեմատելին, կապակցվելով որևէ ածականի կամ դերբայի հետ, մակադրություն է ձևավորում (*«Ձախորդ օրերը ծնունդն նման կուզան ու կերթան //... Որպես համախորդ շարվեշարան կուզան ու կերթան»* (Ջե, 90): *«Փոտեցան գեղեցիկ, անգին օրերս // Քամին քջեց՝ մղեղի պես անցկացան»* (ՋԱե, 81)): Այն դեպքերում, երբ համեմատելին իր վրա է վերցնում համեմատայալի գործողությամբ արտահայտվող որևէ դրսևորում, համեմատությունը դառնում է երկանդան: Երբ համեմատումը կատարվում է գուգորդումների միջոցով (ներքին համեմատություն)՝ զուգահեռներ տանելով համեմատվող երևույթների միջև, Ջիվանին դրանք նույնացում կամ հակադրում է: Եթե համեմատության եզրերից մեկը հոգեվիճակ, տրամադրություն կամ սոցիալական երևույթ է, համեմատվող եզրերը՝ որպես առանձին կառուցվածքներ, հաճախ փոխաբերություն են ձևավորում, որոնց բաղադրիչներն իրենց հերթին այս կամ այն խոսքի մասերով կառուցվող մակվորներ կամ տրամաբանական որոշիչներ են: Նման կառուցվածքներ կան «Երգ Հայաստանի», «Բայաթի», «Ձախորդություն» բանաստեղծություններում: Ծավալուն կամ բազմանդամ համեմատություններում Ջիվանին գործածում է միջնորդավորող բառակապակցություններ, որոնք համեմատությունը ձևավորող բաղադրիչների համար հատկանիշ բացահայտող միջոցներ են: Միջնորդավորող այդ բառակապակցությունները՝ որպես առանձին միավորներ, ևս պատկերավորման որևէ միջոց են: Սրանք նմանվում են զուգահորդությունների, որոնց ամեն մի հատվածն առանձին վերցրած մի ինքնուրույն համեմատություն կամ փոխաբերություն է, որոնք, իրար հաջորդելով, սաստկացնում կամ ամբողջացնում են պատկերը (*«Կեղծ քարոզիչներ ելած են հանդես // Խաբում են շատ մարդու երեխայի պես // Ներքուստ գայլի նման հոտն անում են կես// Արտաքուստ հովվի հետ, տես քրքռանքը...»* (Ջե, 47)):

Ձևատրամաբանական կառուցվածքով առանձնահատուկ են ժխտական համեմատությունները, որոնց կառուցումը հենված է այն իմպլիկատիվ ասույթի ճշմարտացիության վրա, ըստ որի, եթե երկու երևույթներ նույնացված չեն, ապա դրանք կարող են ունենալ իրարից տարբեր բնութագրիչներ: Ժխտական համեմատություններում Ջիվանին, բացասելով համեմատվող եզրերի նույնությունը, համեմատումն իրականացնում է եզրերը տարբերակող հատկանիշների հիման վրա: Արդյունքում տեղի է ունենում համեմատելիի և համեմատայալի այն բնութագրիչների համեմատում, որոնցով դրանք չեն նույնանում (*«Հայ եմ ծնվել, հայ կմնամ, հայ կմեռնիմ հայի պես// Սև դավաճան, տերը մատոնդ չեմ լինի Հուդայի պես»* (ՋԱե, 34): *«Թռչի, խայտա ինչպես կայտառ մի մանուկ// ...Ոչ թե թռչնած ծաղկի նման վաղանցուկ»* (ՋԱե, 136)):

Փոխաբերությունները Ջիվանու չափածոյում զուգորդումների և համեմատումների հետևանք են, որակումների և պարզաբանումների միջոց: Այդ է պատճառը, որ նրա բանաստեղծություններում հանդիպող փոխաբերությունների հիմքում հաճախ ընկած են նաև պատկերավորման այլ միջոցներ, որոնք ուժեղացնում են խոսքի հուզականությունը: Փոխաբերությունների կառուցվածքում շատ են հատկապես անձնավորումը և խորհրդանիշը: Խորհրդանիշները դրսևորվում են հիմնականում գույների, բնության երևույթների միջոցով: Խորհրդանիշների վառ օրինակներ հանդիպում են Ջիվանու այլաբանական բնույթի ստեղծագործություններում, որտեղ փոխաբերական իմաստով գոր-

ծածված են ոչ միայն առանձին բառեր, այլև բառակապակցություններ: Ամբողջությամբ այլաբանություն է «Ֆեսը» բանաստեղծությունը, որում Ջիվանին բնութագրում է թուրքին իր վարքագծով ու ելությամբ: Ֆեսը թուրքն է, նրա խորհրդանիշը, որը դարձել է բանաստեղծության հիմքը կազմող բանալի բառը և հանդես է գալիս և՛ որպես հասկացություն, և՛ որպես արտահայտչամիջոց (կրկնության տեսքով), և՛ որպես ռիթմավորման միջոց (հանգավորող բառ): Ուշագրավ են նաև *Ֆես* բառի հետ գործածվող մյուս բառ-հասկացությունները, որոնց մի մասը համատեքստին համահունչ ընտրված օտարաբանություններ են և ուժեղացնում են «Ֆեսի» նկարագիրը (*«Էլ չեմ սիրում, ատեցի կարմիր գուլնի ալ ֆեսը// Ահագին աղմուկ հանեց, արավ դալմադալ ֆեսը// ...Արյունարբու թունավոր օձ ու ռխակալ ֆեսը//...Դարձել է բյուր ծականի ցնցոտի հին շալ, ֆեսը//...Ողջ աշխարհից հարգված գլխիս շյսպա ունիմ // Ինչ եմ անում հնացած, անկար, անշուլալ ֆեսը»* (ՋԵ, 116)):

Ջիվանու լեզվի այլաբերական համակարգում առանձնակի դեր ունեն շրջասությունները, մակդիրները: Շրջասությունների շարքում հանդիպում են ինչպես կայուն շրջասական կապակցություններ (*ազգային բլբուլ* (ՋԵ, 422), *աֆրոդիտյան ախտ* (ՋԵ, 197), *աֆրոդիտյան թագուհի* (ՋԵ, 313), *Բաքուսին ուխտ գնալ* (ՋԵ, 351), *Չայոց եղիա* (ՋԵ, 415), *Չայոց Նահապետ* (ՋԵ, 416), *մեծ եղբայր*, *Սորփետսի գիրկն ընկնել* (ՋԵ, 96)), այնպես էլ բանաստեղծության համատեքստին համահունչ շրջասություններ: Մակդիրները (*կենդանի մարտիրոս, անբիծ հավատ, պայծառ աստղածին, արիական շառավիղ, փակված առեղծված, հոգեբուխ ավերակներ, աստղադիտաց սրտեր, սզագզյաց տխակներ, մահաշունչ քամի, հաշտության հոգի, մահառիթ գերանդի*) ոչ միայն առարկաների, գործողությունների հատկանիշները փոխաբերաբար արտահայտող, այլև Ջիվանու երևակայությունը և մտածողությունը բնութագրող լեզվական միավորներ են, որոնց ոճական արժեքը դրսևորվում է պատկերավորման այլ միջոցների հետ փոխկապակցվածության համատեքստում:

Պատկերավորման և արտահայտչական միջոցները, Ջիվանու խոսքում փոխկապակցված և փոխայանմավորված հանդես գալով, անբաժանելի համակարգ են ձևավորում: Առանձին-առանձին դրսևորվելուց զատ՝ դրանցից յուրաքանչյուրը կառուցվածքային բաղադրիչ է և միջոց մյուսի համար: Միատեղ հանդես գալով՝ սրանք կան բացում, ընդարձակում են միտքը, կան ուղեկցվելով հակադրություններով, դարձվածքներով, պացվածքներով, զեղչումներով՝ սեղմում, ընդհանրացնում են ասելիքը՝ երևույթի նկարագիրը դարձնելով առավել զգացական, պատկերավոր ու տպավորիչ:

Չակադրությունների ոճական դրսևորումները: Բազմազանությամբ և առանձնահատկություններով աչքի են ընկնում հակադրությունները, որոնք հեղինակային խոսքը ոճավորող ինքնատիպ լեզվական իրողություններ են: Շատ հակադրությունների բովանդակային ուղղվածությունը դրսևորվում է բանաստեղծության վերնագրում («Լացն ու ծիծաղը», «Եկան ու անցան», «Տասնվեց-վաթսուներկ», «Կուզան ու կերթան», «Պիտունն ու տգետը» և այլն): Չակադրությունների իմաստը ներկայացնելիս Ջիվանին նախընտրում է պարզ արտահայտչամիջոցներ՝ շեշտը դնելով ժողովրդական մտածողությանը հատուկ առարկայական համադրումների և համեմատությունների վրա: Խոսքի արտահայտչականությունը պայմանավորում է զգացական, ոչ բարդ դատողական գործոններով: Դիմում է ժողովրդական բանահյուսության և խոս-

քի մեջ հաճախ գործածվող և երևույթները համընկալելի դարձնող հասկացությունների, առածների, ասացվածքների օգնությամբ, որոնց միջոցով էլ առանց լրացուցիչ մեկնաբանության խորացնում և ամբողջացնում է պատկերը: Ուշագրավ են բնության երևույթների, մարդկային ապրումների, մարդկանց և կենդանիների վարքագծերի համեմատությամբ կառուցված հակադրությունները, որոնցում հակընդդեմ իմաստով օգտագործված բառերը, հանդես գալով իրենց անվանողական առույթով, նպաստում են երևույթների գնահատմանը, արժևորմանը և վերածվում խորհրդանիշների (*«... Դու արքայության տիպար ես, գարուն// Չմենը դժիխք է կենաց տանջանք»* (Ձե, 180)): Իրար հակադրելով տարբեր երևույթներ ու առարկաներ, վարքագծեր, մարդկային տարբեր որակներ՝ Ձիվանին դրանց միջև անցկացնում է համեմատություններ: Հակադիր իրադրություններ պատկերելիս արժևորում է դրանք՝ դրանցից մեկին տալով գերադասություն, արտահայտում իր անձնական վերաբերմունքն ու գնահատականը (*«... Աշխարհի փորձանքներուն դիմացող տոկունն է լավ// Ձիվան, ինչպես արևը աստղերի թագուհին է// Այնպես էլ տգետներից փորձված գիտունն է լավ»* (Ձե, 173)): Ներթափույց հակադրություններում Ձիվանին գործածում է զույգավորված բառակապակցություններ, որոնց յուրաքանչյուր հաջորդի առաջին բաղադրիչը, համընկնելով նախորդի երկրորդ բաղադրիչի հետ, փոխանցականության սկզբունքով իր վրա է վերցնում նախորդների հատկանիշներն ու որակները: Դրանով իսկ խորացվում, ուժեղացվում, ամբողջացվում է ողջ հակադրությունը, որը փաստորեն գոյություն ունի հակադրությունն արտահայտող շղթայի առաջին և վերջին բաղադրիչների միջև: Օրինակ՝ «եղած բան» բանաստեղծության *«Իմ հարազատ կարծրված բարեկամս ծուռ դուրս եկավ// Ծուռ ու մատնիչ, մատնիչ ու խև, խև ու չար դահիճ եղավ// Թերավարժ քիմիկոսի հետը ակի հանք փնտրեցինք// Ակն ապակի, ապակին հաղճ, հաղճը քար ու խիճ եղավ// Դահլիճի տանիքիցը մեր տանիքը թրթուր եղավ// Թրթուրը որդ, որդը մեղու, մեղուն էլ կարիճ եղավ»* հատվածում փոխանցականության սկզբունքով կապակցված շղթաներն են *բարեկամ → ծուռ → ծուռ ու մատնիչ → մատնիչ ու խև → խև ու չար դահիճ, ակ → ակն ապակի → ապակին հաղճ → հաղճը քար ու խիճ, թրթուր → թրթուրը որդ → որդը մեղու → մեղուն էլ կարիճ* անցումները, որոնցում հակադրության եզրեր են համապատասխանաբար *բարեկամ-չար դահիճ, ակ-քար ու խիճ, թրթուր-կարիճ* զույգավորումները:

Ձևաբանական-ձևակազմական առումով Ձիվանու հակադրությունները կառուցված են տարբեր խոսքի մասերով: Բառական հակադրության դեպքում հականշություն արտահայտող բառերը հիմնականում պատկանում են միևնույն բառաքերականական կարգին: Որպես հականիշների կապակցման եղանակ՝ Ձիվանին գերադասել է շաղկապականը: Քիչ է հանդիպում *և, ու* միավորիչ պարզ շաղկապներով կառուցվածք, այն էլ հիմնականում այնպիսի հակադրամիասնություններում, որոնք ձևավորված են հարադիր բարդություններով (*սար ու ծոր, քաղցր ու դառն, լաց ու ծիծաղ, մուս ու լույս, չար ու բարի* և այլն): Թե՛ միանդան և թե՛ երկանդան հակադրությունների դեպքում Ձիվանին գործածում է *թե...թե, մերթ...մերթ, ոչ...ոչ, էլ...էլ*, ինչպես նաև ժողովրդախոսակցական լեզվում հաճախ հանդիպող *համ...համ, հա...հա* կրկնավոր շաղկապները, որոնք, փոխարինելով մերթ *թե...թե* - ին, մերթ *և...և* - ին, մերթ *կամ...կամ* - ին,

թվարկման իմաստ և երկընտնադր պարունակող հակադիր իրավիճակներ են արտացոլում: Այս շաղկապներով են կառուցված նաև որոշ հակադրամիասնություններ («*Թե լավ և թե վատ օրերը, անշուշտ // Շեն մնալ հավետ շարունակ, կանցնին// Ողջը կմեռնեն, թե քաղցած, թե կուշտ// Մարդ թե կենդանի գետնի տակ կանցնին*» (ՋԱԵ, 73): «*Դամ լավ է, համ շատ վատ է, իմ կարծիքով, այժմյան դարը*» (ՋԵ, 62)): Կան հակադրությունների կառուցվածքներ, որոնցում թե-ն պայմանի հարաբերություն է արտահայտում և հաճախ *եթե* պայմանի շաղկապի իմաստ ձեռք բերելով՝ ոճական տեսանկյունից խոսքն ավելի է մոտեցնում ժողովրդախոսակցական լեզվին («*...Թե գիտուն ես, շուտ կը մաշվիս// Խելագար ես՝ վնաս չունի//...Իմաստուն ես, շուտ կը մաշվիս// Թե հիմար ես՝ վնաս չունի*» (ՋԵ, 115)): Ունի հակադրություններ՝ կառուցված *ոչ թե* ներհակական շաղկապով, *կարծես թե* համեմատության շաղկապով («*...Թռչի, խայտա ինչպես կայտար մի մանուկ// Ոչ թե թռչնած ծաղկի նման վաղանցուկ*» (ՋԱԵ, 136): «*...Կարծես թե ծռվել է ամբողջ աշխարհը//Իսկ ուղիղ մնացած մեկ անկյուն չկա*» (ՋԵ, 53)): Սրանք իրար են կապում ամբողջական նախադասություններ և արտահայտելով համապատասխանաբար ժխտման և անհամապատասխանության հարաբերություններ՝ ուղեկցվում են պատկերավորման և արտահայտչական տարբեր միջոցներով: Որոշ հակադրություններ կառուցված են ոչ թե շաղկապներով, այլ հակամոտ քայերով ու քայական հարադրություններով: Սրանցում արտահայտված մտքերը զնահատողական իմաստ ունեն և ցույց են տալիս հեղինակի բացասական վերաբերմունքը հակադրությամբ ներկայացվող որակներից մեկի նկատմամբ («*Մարդ կա, որ միշտ խոսում է տուտ//Խոսելուց՝ չխոսելն է լավ// Մարդ կա, խոսի՝ ունի օգուտ// Չխոսելուց՝ խոսելն է լավ*» (ՋԵ, 229): «*Ծուլ, անպիտան, անգործ մարդը// Եղած-չեղած՝ մեկ հաշիվ է//...Տգետ, մոլի կարգավորը// Եղած-չեղած՝ մեկ հաշիվ է*» (ՋԵ, 294)):

Ջիվանին հակադրություններ է ստեղծել նաև եղանակավորող բառերով (*Երանի* վերաբերականի և *վայ* ձայնարկության միջոցով): Ընդ որում, հակադրություն կազմող միավորների մի մասն արտահայտված է մակդիրներով, մյուս մասը՝ տրամաբանական որոշիչներով, մի մասն էլ՝ ժրխտական ձևերով («*...Երանի մեղմ խոսացողին//Վայ գա կրքոր բարկացողին//...Երանի հաց մուրացողին// Վայ գա հոգի որսացողին*» (ՋԵ, 124)):

Կրկնությունները Ջիվանու չափածոյում: Ջիվանու բանաստեղծություններում առկա հնչյունային և բառային կրկնությունները ձևակառուցում կարելի է բաժանել երկու խմբի՝ **ա) ներտնային, բ) միջտնային:** Ներտնային հնչյունային կրկնակները հիմնականում հանդես են գալիս վերջույթների տեսքով՝ չբացառելով նաև տողամիջյան միևնույն հանգերի գոյությունը: Ներտնային կրկնություններով բանաստեղծության յուրաքանչյուր տուն ունի մնացած տներից անկախ հանգավորում, որը նպաստել է առանձին վերցրած տան որևէ տողի՝ իբրև ռիթմավորման միավորի ինքնուրույնությանը և տողերի ներդաշնակությամբ: Որոշ քառատող տներով բանաստեղծությունների **գ** տողերն ունեն աշուղական երգածների պարտադրված կառուցվածքով պայմանավորված ազատ հանգ:

Այլ են Ջիվանու ստեղծագործություններում առկա միջտնային կրկնությունները՝ հատկապես դրանց բառային կրկնակներով տեսակները, որոնք


դրստրվում են բանաստեղծական տների հանգավորման (aaaa) → (bbba) → ... → (ccca), (abab) → (cccb) → ... → (dddb), (aaoa) → (bbba) → ... → (ccca), (aaoa) → (oaoa) → ... → (oaoa) շղթաներում առկա օրինաչափություններով: Սրանցում հանդիպում են հանգավորման բոլոր տեսակները: Այս կառուցվածքներով որոշ բանաստեղծություններում («Անհակառակորդ առարկա չկա», «Անի-ասավ», «Անցյալ-ներկան», «Իմ կյանքը») կան նաև հիմնականում վերջույթների տեսքով հանդես եկող ներտնային կամ միջտնային բառային մասնակի կրկնություններ: Երբեմն ընթերցելով միայն ստեղծագործության մեջ օղակային շղթա կազմող կրկնությունները, որոնք խոսքին հաղորդել են հռետորական ուժգնություն, կարելի է գուշակել, թե ստեղծագործությունն ամբողջությամբ ինչ թեմատիկ ուղղվածություն ունի:

Չարակրկնություններ: Առավելապես տարածված են դերանունների միջոցով կազմավորվող շարահյուսական կառուցվածքների հարակրկնությունները: Առանձնաճանաչ են հարցական-հարաբերական դերանունների հարակրկնությամբ ուղեկցվող հարցական կառուցվածքները: Այդպիսի կառուցվածքներ կան «Չարցեր», «Վարդ», «Մեկ է» բանաստեղծություններում, որտեղ Ջիվանին իր համար անորոշ պատասխան ունեցող հարցադրումներով կիսվում է ընթերցողի կամ բանաստեղծության մեջ երկխոսության երկրորդ կողմ հանդիսացող այն սուբյեկտի հետ (օրինակ՝ վարդի), որին ուղղում է իր հարցադրումը: Սրանցում առկա են և՛ տողային, և՛ կիսատողային հարակրկնություններ («**Մինչև երբ չարչարես անբախտ սոխակին// Ով դու ապերախտ վարդ, անխնամ ծաղիկ // Մինչև երբ, ինձ ասա, այդ վառ կրակին // Մեջը պիտի այրես որպես թիթեռնիկ// Մինչև երբ, ինձ ասա, խոճալին էրվի**») (ՋԵ, 251): Որոշ բանաստեղծություններում հարակրկնություն են ձևավորում որոշյալ կամ անորոշ դերանունները, որոնք նաև թվարկման իմաստ են արտահայտում («**Մեկը յուր մեռելը կուլա // Մեկ պսակվի կը խնդա //...Մեկը ուտելուց կը ճաքի // Մեկը անոթի կը մեռնի...**») (ՋԵ, 200):

Կան բանաստեղծություններ, որոնցում հարակրկնությունները կոչական կառույցներ են ձևավորում: Այդպիսին է «Բախտը» բանաստեղծությունը, որում հարակրկնվող «**հերի՞ք է**»-ն նաև կիսատողային հարակրկնություն է: Նույն պատկերն է «Սելխ» բանաստեղծության մեջ, որտեղ կոչական իմաստով հարակրկնված «մի լինիր» բառակապակցությունը նաև այլ տողերի վերջույթ է: Բանաստեղծության մեջ միևնույն բառակապակցությամբ միաժամանակ և՛ հարակրկնություն, և՛ վերջույթ ձևավորելու այս հնարով Ջիվանին սաստկացնում է խոսքի իմաստը, ուժեղացնում նրա ազդեցությունը՝ այդ ընթացքում շեշտադրելով որոշակի բացասական երևույթներից զերծ մնալու իր նախապատկերվածը («**Մի՛ լինիր, ով բնություն, կյանքիս դավաճան մի՛ լինիր // Մի՛ լինիր, ինքնահավան մարդուն սիրական մի՛ լինիր//...**») (ՋԵ, 372):

Կրկնությունների հետաքրքիր դրսևորումներ կան «Շուտ եկ» և «Խիստ է, խիստ» բանաստեղծություններում: Երկուսում էլ վերնագրերը համընկնում են առաջին տան բոլոր և հաջորդ տների՝ **ե** ու **զ** տողերի վերջույթների հետ: Առաջինում էական առանձնահատկությունն այն է, որ բանաստեղծության **ա** և **բ** տողերը («**Առաջվան հին բարեկանս, հաջող հրեշտակս, շուտ եկ//Տխուր սրտիս մխթարող հոգիս, աղավնյակս, շուտ եկ**») նույնությամբ հարակրկնվում են հաջորդող բոլոր տների **ե** և **զ** տողերում: Եթե ցանկացած տուն

զույգավորենք առաջին տան հետ որպես երկտուն միավոր, ապա կրկնություն հանդիսացող տողերը կօղակեն այդ երկտուն միավորների միջանկյալ՝ ութ տողանոց հատվածները: «խիստ է, խիստ» բանաստեղծությունը կրկնությունների առումով ունի համանման կառուցվածք, սակայն այստեղ՝ հաջորդող երեք տներում, կրկնվում են ոչ թե առաջին տան միայն *ա* և *բ* տողերը, այլև հաջորդաբար (*ա*, *բ*)-ն, (*գ*, *դ*)-ն, (*ե*, *զ*)-ն: Այսինքն՝ I տան *ա* ու *բ* տողերը կրկնվում են II տան *ե* և *զ* տողերում, *գ* ու *դ* տողերը՝ III տան *ե* և *զ* տողերում, իսկ *ե* ու *զ* տողերը՝ IV տան *ե* ու *զ* տողերում: Այսպես Ջիվանին երկրորդից չորրորդ տներում բացում, ընդարձակում է առաջին տան մեջ արտահայտած իր մտքերը՝ նույնությամբ պահպանելով առաջին տան որոշ հատվածներ: Նկարագրված հարակրկնությունների կառուցվածքները համապատասխանաբար կարելի է գծապատկերել հետևյալ կերպ.



Կողք կողքի շարված և երեք մասի տրոհված ուղղանկյունները բանաստեղծության տներն են, իսկ ամեն մի ուղղանկյան յուրաքանչյուր տրոհված մասում տեղադրված է համապատասխան տան վեց տողերը կազմող երեք զույգ տողերից յուրաքանչյուրը: Առաջին կառույցը կարելի է անվանել *նույնահանգույց միջտնային օղակներով հարակրկնական շղթա* (բոլոր օղակների համար հանգույցը առաջին տան առաջին զույգ տողերն են), երկրորդը՝ *տարահանգույց միջտնային օղակներով հարակրկնական շղթա* (ամեն մի օղակ ունի իր՝ մյուսների հետ չհամընկնող զույգտող հանգույցը):

Վերջույթներ: Ինչպես և հարակրկնությունները, վերջույթները և ունեն բազմաձև դրսևորումներ: Դրանք խմբավորել ենք չորս դասերի մեջ, որոնցից յուրաքանչյուրը՝ քառատող տներով բանաստեղծությունների դեպքում, համապատասխանաբար կարելի է պատկերել հետևյալ կառուցվածքային շղթաների տեսքով. (a, A, a, A) → (b, b, b, A) → ... → (c, c, c, A) (1), (aA, aA, aA, aA) → (b, b, b, aA) → ... → (c, c, c, aA) (2), (aA, aA, O, aA) → (b, b, b, aA) → ... → (c, c, c, aA) (3), (aA, aA, O, aA) → (O, aA, O, aA) → ... → (O, aA, O, aA) (4): (1), (2), (3) շղթաներն առանձնանում են վերջույթների դասավորվածությամբ

միատեսակ օրինաչափությամբ՝ սկսած երկրորդ տնից, և տեղադրված են նշված տների վերջին տողերում, այսինքն՝ միևնույն հեռավորության վրա: Սրանք տարբեր են լոկ բանաստեղծության գլխամասային տան մեջ առկա վերջույթների տեղադրվածությամբ: Վերջույթների բաշխվածության առումով այս ձևերից յուրաքանչյուրը համապատասխանում է աշուղական որոշակի երգածի: Մասնավորապես (1)-ը իր կրկնությունների օրինաչափությամբ համապատասխանում է դուբեյթ և դոշմա երգածներում առկա կրկնությունների կառուցվածքներին: Նույնօրինակ համապատասխանություն գոյություն ունի նաև (2) և (3) շղթաների պարագայում, որոնց կրկնակներն իրենց կառուցվածքային ձևանմուշն ունեն՝ ի դեմս գագելի, սեմայիի, դիվանիի, մուխամմազի: (1)-(3) կառուցվածքներ ունեցող մի շարք բանաստեղծություններում հանդիպում են այնպիսիները, որոնցում առաջին տանը հաջորդող որոշ տների *ա, բ և գ* տողերն ուղեկցվում են ոչ թե նույնահանգ, այլ ռեդիֆային վերջույթներով, այսինքն՝ ունեն (bB, bB, A) կամ (bB, bB, bB, aA) տեսքը: (1) դասի մեջ են ներառվում նաև այն բանաստեղծությունները, որոնցում համապատասխան վերջույթ կրկնվում է ոչ թե որևէ բանատող ամբողջությամբ, այլ նրա մի մասը միայն (կառուցվածքային շղթան այս դեպքում ունի (a, bB, aA, bB) → (c, c, c, bB) → ... → (d, d, d, bB) տեսքը):

Կան այնպիսի բանաստեղծություններ, որոնցում խախտված են թվարկված երգածների դասական նմուշօրինակներին յուրահատուկ պարտադիր պահանջները տների քանակի, իսկ տողերում՝ հատածների և վանկերի ընդունված քանակների հարցում, որը վկայում է, որ Ջիվանին պակաս կարևորություն չի տվել երգի՝ որպես բանաստեղծության բովանդակային արժեքին, որից դրված էլ երբեմն խախտել է հայտնի երգածներում ընդունված դասական կանոնները տների, հատածների, ոտքերի և վանկերի հարցում:

Մի շարք բանաստեղծություններում հանդիպում են վերջույթներ, որոնք բանաստեղծության հաջորդ հատվածում կամ տան մեջ կրկնվում են ոչ թե նույնությամբ, այլ ենթարկված են մասնակի բառափոխությունների: Որոշ վերջույթներ էլ պահպանում են նախորդ տողերի շարահյուսական կառուցվածքը և նախորդող վերջույթների բովանդակությունը, սակայն ամբողջությամբ փոխում են իրենց բառակազմը (օր.՝ «Սիրտը» բանաստեղծությունը): Այս դեպքում դրանք հանդես են գալիս իմաստային կրկնությունների տեսքով և խորացնում են միտքը: Մասնակի փոփոխություններով կրկնությունների երևույթը նկատելի է նաև «Երանի և վայ» հնգատող տներով բանաստեղծության բոլոր տների վերջին երկու տողերում, ուր հաջորդաբար հարակրկնվող *երանի* եղանակավորող բառը և *վայ* ձայնարկությունը շեշտադրում, ավելի են խորացնում ու բացահայտում բանաստեղծության վերնագրում առկա հակադրությունը (*«Չմենոն եկավ ծերմակ մորուք// ...Վայ գա դուրսը մնացողին//...Երանի պարզ խնդացողին// Վայ գա ազատ մտածողին//...Երանի մեղմ խոսացողին// Վայ գա կրքոտ բարկացողին... »*):

Բազմաթիվ բանաստեղծություններում խոսքն ուղեկցվում է ոչ միայն արտաքինապես նույն կառուցվածքն ունեցող կրկնություններով, այլև բանաստեղծության բովանդակային մասը կազմող իմաստային կրկնություններով, որոնք միևնույն մտքի կրկնություն են, սակայն այլ բառերով ու ձևակերպումներով:

Եզրակացություն

1. Ձիվանու բառապաշարը հարուստ է հայոց լեզվի և՛ գրական, և՛ ժողովրդախոսակցական, և՛ բարբառային բառերով: Արևելահայ և արևմտահայ գրական, ժողովրդախոսակցական և բարբառային բառերի, քերականական ու շարահյուսական ձևերի, ինչպես նաև հնաբանությունների, փոխառությունների ու օտարաբանությունների գործածումը համահունչ է բանաստեղծությունների թեմային և համատեքստային իրադրություններին: Իր կանոնավորվածությամբ ու մշակվածությամբ Ձիվանու քնարերգության լեզուն գրականացված ժողովրդային լեզու է, որն իր բառային կազմով, քերականական և շարահյուսական կառուցվածքով դուրս չէ գրական արևելահայերենի համակարգից:

2. Ձիվանին վարպետորեն է օգտվել բառերի բազմիմաստությունից: Գործածել է հնացած հոմանիշներ. շատ բառերի վերագրելով ընդլայնված իմաստներ՝ գտել դրանց նոր կիրառություններ: Բառերի իմաստային ընդլայնումը պայմանավորված է այդ իսկ բառերի փոխաբերական կամ փոխանվանական գործածությամբ: Ստեղծել է նոր բառեր, որոնց ձևաբանական կառուցվածքն ու իմաստները պայմանավորված են միտքը ժողովրդի լեզվամտածողությանը և խոսվածքին համապատասխանեցնելու միտումով, զեղարվեստաարտահայտչական և տաղաչափական նկատառումներով:

3. Չարադրությունների անհրաժեշտությունը և նշանակությունը պայմանավորված է նկարագրվող երևույթներն ընդգծելու, իրավիճակներին սաստկականություն հաղորդելու, զգացմունքներն առավել արտահայտիչ ներկայացնելու նպատակով: Ոճականորեն առավել նշույթակիր են հատկապես բայական հարադրությունները, որոնց մի մասը ժողովրդախոսակցական լեզվում տարածված և հայ մարդու լեզվամտածողությունը բնորոշող դարձվածքային արտահայտություններ են:

4. Ձիվանու լեզվի պատկերավորության զլխավոր հայտանիշը միտքը առարկայական համեմատություններով, փոխաբերություններով, անպաճույճ մակդիրներով, ժողովրդական լեզվին հատուկ դարձվածքներով ու ասացվածքներով, շրջասություններով, խորհրդանիշներով արտահայտելն է: Պատկերավորման միջոցներից յուրաքանչյուրը հաճախ կառուցվածքային բաղադրիչ է դարձել մյուսի համար: Միատեղ հանդես գալով՝ սրանք կամ բացել, ընդարձակել են միտքը, կամ հակառակը՝ ուղեկցվելով հակադրություններով, դարձվածքներով, ասացվածքներով, զեղչումներով՝ երևույթի նկարագիրը դարձրել առավել սեղմ ու տպավորիչ:

5. Ձիվանու ոճական առանձնահատկություններից է այն, որ հակադրության եզրերը տարանջատելու նպատակով դրանցով կատարում է բացահայտ կամ ներթաքույց համեմատություններ, որակումներ: Ձգալի են այնպիսի հակադրությունները, որոնք համագործածական կամ ընդհանրական ձևեր չեն և պայմանավորված են հեղինակի երևակայությամբ, աշխարհընկալմամբ, տվյալ պահին նրա ունեցած տրամադրությամբ, այսինքն՝ ավելի շատ իրադրական են, քան՝ իրական: Ձևաբանական-ձևակազմական առումով՝ հակադրությունները կառուցված են տարբեր խոսքի մասերով: Բառական հակադրության դեպքում հականշություն արտահայտող բառերը հիմնականում պատկանում են միևնույն բառաքերականական կարգին: Որպես հականիշների կապակցման եղանակ՝ Ձիվանու խոսքում գերիշխողը շաղկապականն է: Թե՛ միանդամ, թե՛ երկանդամ հակադրությունների դեպքում գործածված են

ժողովրդախոսակցական լեզվում հաճախ հանդիպող կրկնավոր շաղկապներ, որոնք թվարկման իմաստ ունեն և երկընտրանք պարունակող հակադիր իրավիճակներ են արտացոլում: Շաղկապներով են կառուցված նաև հարադիր բարդություններով ձևավորված մի շարք հակադրամիասնություններ:

6. Ջիվանու բանաստեղծություններում առկա վերջույթներն ու հարակրկնությունները ինքնատիպ կառուցվածք ունեն: Անգամ աշուղական հայտնի երգածներում Ջիվանու կրկնակներն ունեն տաղաչափական նկատառումներով պայմանավորված կառուցվածքային ուրույն ձևեր ու որակներ: Շատ են արտաքին կառուցվածքով ոչ նույնական, բայց բովանդակությամբ նույնիմաստ կրկնությունները, որոնք ուղեկցվում են հոմանիշ կամ համանիշ բառերի գործածմամբ: *Հնչյունային և բառային կրկնակները ձևականորեն բաժանվում են երկու խմբի՝ ա) ներտնային, բ) միջտնային:* Առավել ուշագրավ են միջտնային բառային կրկնությունները: Յուրօրինակ ոճական առանձնահատկությամբ են օժտված *նույնահանգույց և տարահանգույց միջտնային օղակներով հարակրկնական շղթաները*, որոնք կարող են հեղինակային համարվել:

7. Վերջույթները ներառում են աշուղական բոլոր երգածները, սակայն որոշ դեպքերում խախտված են դրանց դասական նմուշօրինակին յուրահատուկ պարտադիր պահանջները տների, հատածների և վանկերի ընդունված քանակների հարցում: Մի շարք բանաստեղծություններում վերջույթները կրկնվում են ոչ թե նույնությամբ, այլ մասնակի բառափոփոխություններով իմաստային կրկնությունների տեսքով և խորացնում բանաստեղծության մեջ արտահայտված միտքը: Հանգերգ պարունակող բանաստեղծություններում ակնառու է *նախահանգերգային և հանգերգային* հատվածների տարանջատվածությունը:

Ատենախոսության թեմայով հրատարակվել են հետևյալ հոդվածները՝

1. Ջիվանու լեզվական առանձնահատկությունները// Հայոց լեզու և գրականություն, Ե., 2004, 5-6 (27), էջ 111-118:
2. Հակադրությունը որպես Ջիվանու խոսքի իմաստային միջոց// «Գարուն», Ե., 2005, 9 (463), էջ 40-44:
3. Հակադրությունների ոճական դրսևորումները Ջիվանու ստեղծագործություններում// Հայագիտություն և զուգադրական լեզվաբանություն, Հայոց գրերի ստեղծման 1600-ամյակին նվիրված միջբուհական գիտաժողովի նյութեր, Ե., 2006, պրակ Ե, էջ 141-149:
4. Ջիվանու լեզվի այլաբերական համակարգը// Կանթեղ (գիտ. հոդվածների ժողովածու), Ե., 2007, 3(32), էջ 111-121:
5. Համագործածական բառերի ոճական դրսևորումները Ջիվանու խոսքաչառում// Պրոֆ. Ա. Տեր-Գրիգորյանի ծննդյան 80-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր, Ե., 2009, էջ 67-73:
6. Ջիվանու լեզվի բառապաշարը// Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտի հիմնադրման 40-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութեր, Վանաձոր, 2009, պրակ Ա, էջ 94-100:
7. Ջիվանու լեզվի ժողովրդախոսակցական և գրական բառաչերտերը// Խ. Աբովյանի անվ. հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտական տեղեկագիր, Ե., 2011, 2-3 (14-15), էջ 113-123:

Авагян Лаура Мартиновна
Язык лирики Дживани

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10.02.01. - «Армянский язык»
Защита диссертации состоится 3 декабря 2012 г., в 15⁰⁰, на заседании специализированного совета по лингвистике 019 ВАК, в Институте языка им. Г. Ачаряна НАН РА, по адресу Ереван 0015, ул. Григора Лусаворича 15.

Резюме

У каждого автора художественного произведения есть свой особый язык и стиль. Он отличается от других не только своеобразным мастерством и эстетическим вкусом, но и особенностями лексики, грамматических конструкций и выразительных средств. Изучать язык писателя означает исследовать не только общие свойства, присущие всем писателям, но и выявить признаки этих общих свойств с одной стороны и особенности словесно-художественного творчества, присущие языку данного автора, с другой.

Исследование произведений Дживани показывает, что языковая значимость так же актуальна, как и художественная ценность произведений. Лексические, грамматические и синтаксические конструкции, система выразительных и изобразительных средств языка Дживани не исследованы, также не изучены литературно-художественные и лингво-стилистические особенности его творчества.

Цель данного исследования изучить с научной точки зрения особенности языка поэзии Дживани и дать их лингвистическую характеристику. В связи с поставленной целью в диссертации определены следующие задачи:

1. выявление тех языковых средств, которые присущи художественной речи Дживани и обусловлены его лексикой,
2. исследование системы изобразительных и выразительных средств языка; анализ и выявление таких изобразительных средств, как метафора, сравнение, эпитет, параллелизм, противопоставление, повтор; изучение тех стилистических приемов, которые характеризуют Дживани как поэта,
3. определение и анализ языковых средств, отличающиеся авторскими типологическими особенностями, которые формируют, характеризуют и раскрывают языковое мышление поэта.

Диссертация состоит из введения, 2 глав со своими подглавами (6 и 3 соответственно), выводов, списка использованной литературы и 2 приложений.

Во введении дается общая характеристика языка Дживани, обосновывается актуальность изучения лингво-стилистических особенностей его поэзии, а также оценивается его роль в создании народно-ашугского языка.

Первая глава диссертации (*Лексика Дживани*) посвящена изучению лексики Дживани. Сделан стилистический анализ узуальных, диалектных, народно-разговорных и литературных пластов, архаизмов, заимствований, варваризмов, неологизмов и окказиональных слов. Последний параграф главы посвящен стилистическим особенностям составных конструкций и системе фразеологических единиц.

Во второй главе (*Изобразительные средства в поэзии Дживани*) рассматривается система изобразительных средств, а также выявляются стилистические особенности противопоставлений и повторов. Одна из особенностей поэзии Дживани - использование таких противопоставлений, которые не являются узуальными или общепринятыми, т.е. вне контекста не имеют противоположные друг другу значения. Это обусловлено мироощущением, воображением и настроением поэта. Иными словами, они, скорее всего, ситуативные, нежели реальные, так как вне контекста не имеют антонимических значений (мы их назвали *общеконтекстуальными*). Также рассматриваются интересные с точки зрения морфологии противопоставления, которые построены с помощью разных частей речи.

В данной главе подробно анализируются *односвязные и разносвязные межкуплетные анафорические конструкции*, которые из-за своеобразных стилистических свойств являются авторскими. Изучены также окончания, имеющие разновидности проявления. Они разделены на 4 группы, которые, в случае стихотворений, состоящих из четверостиший, можно изобразить следующими формулами: $(a,A,a,A) \rightarrow (b, b,b,A) \rightarrow \dots \rightarrow (c,c,c,A)$, $(aA,aA,aA,aA) \rightarrow (b,b,b,aA) \rightarrow \dots \rightarrow (c,c,c,aA)$, $(aA,aA,O,aA) \rightarrow (b,b,b,aA) \rightarrow \dots \rightarrow (c,c,c,aA)$, $(aA,aA,O,aA) \rightarrow (O,aA,O,aA) \rightarrow \dots \rightarrow (O,aA,O,aA)$.

С точки зрения метрики, у Дживани присутствуют все формы ашугского стихотворения. Однако в некоторых произведениях нарушен необходимый для такой поэзии стихотворный размер, т.е. нарушены формы строфы с рифмами. Иными словами, нарушено количество строф, а в случае строк нарушено принятое количество цезур и слогов. Это свидетельствует о том, что Дживани придавал огромное значение содержательной стороне своих произведений, что и привело к нарушениям принятых правил стихотворных форм.

В некоторых стихотворениях окончания не рифмованы одинаково, а с частичными словоизменениями. В таких случаях они проявляются как семантические повторы и тем самым подчеркивают основную идею стихотворения.

Диссертация заканчивается выводами, которые обобщают результаты проведенной работы.

Laura M. Avagyan
The Language of Jivani's Poetry

The thesis claiming a scientific degree of Candidate of Philological Sciences
on the speciality 10.02.01 - "Armenian Language"
The defense will be held on the 3rd of December 2012, at 15⁰⁰, at the address,
Yerevan 0015, Grigor Lusavorich Street 15, Institute of Language named after
H.Acharyan of National Academy of Sciences, at the session of Specialized of
Linguistics Council 019 HAC

Summary

It is common knowledge that every author of verbal art has their own language and style. They differ from each other not only in their unique artistry and aesthetic features, but also in special usage of vocabulary, grammatical structures and expressive means. To study the language of a writer means to analyze not only general features that are typical of any writer, but also to identify the specific, distinguishing characteristics of a particular writer's work of art, in this case, Jivani's poetry.

The study of Jivani's works has shown that the linguistic significance of a piece of verbal art is as relevant as its aesthetic value. Lexical, grammatical and syntactic constructions, the system of expressive means of Jivani's poetic language have not been studied, neither have linguo-stylistic, literary and artistic features of his creative work.

The aim of our study is to scientifically elucidate the characteristics of the language of Jivani's poetry and give an evaluation of its linguistic features. Based on the above mentioned propositions we have defined the following goals:

1. to reveal those linguistic means that are characteristic of Jivani's art of speech and are determined by his vocabulary,
2. to study the system of figurative and expressive means; to analyze and reveal such expressive means as metaphor, simile, epithet, parallelism, opposition, repetition; to examine the stylistic devices that characterize Jivani as a poet,
3. to define and analyze the linguistic means specifying typological features that shape, characterize and reveal the poet's linguistic thinking.

The dissertation consists of an introduction, 2 chapters with 6 and 3 sections, respectively, a conclusion, a reference list of used literature, 2 appendices.

The **Introduction** touches upon general features of Jivani's poetic language, the relevance of the study of linguo-stylistic features of his poetry, as well as the evaluation of Jivani's role in creating and spreading the language of national ashik art.

The **first chapter** (*Jivani's vocabulary*) deals with the study of the vocabulary of Jivani's poetry. The chapter focuses on stylistic analysis of common, dialectal, colloquial, literary layers of vocabulary, archaisms, borrowings, barbarisms, neologisms and occasional words.

The last section of chapter 1 is about stylistic features of compound constructions and the system of phraseological units.

The second chapter (*Expressive means in Jivani's poetry*) deals with the peculiarities of figurative system of Jivani's poetry. It also reveals stylistic features of opposition and repetition. One of the characteristics of Jivani's poetry is the use of such oppositions that are not usual or common, i.e. out of context they do not have opposite meanings. This is conditioned by the poet's view of life, his imagination and state of mind and mood. Otherwise stated, they are situational rather than actual, as far as they are not antonyms out of context (we have called them *contextual*). The poet also used opposition that is of special interest from the morphological point of view, as they are constructed by means of different parts of speech.

In this chapter a thorough analysis of *simply connected and multiconnected constructions of anaphora between stanzas* has been carried out. They are considered authorial owing to special stylistic features. Another characteristic feature of Jivani's poetry is endings that have different ways of manifestation. They are divided into 4 groups. In case of poems consisting of quatrains, each of them can be represented using the following formulas: $(a,A,a,A) \rightarrow (b,b,b,A) \rightarrow \dots \rightarrow (c,c,c,A)$, $(aA,aA,aA,aA) \rightarrow (b,b,b,aA) \rightarrow \dots \rightarrow (c,c,c,aA)$, $(aA,aA,O,aA) \rightarrow (b,b,b,aA) \rightarrow \dots \rightarrow (c,c,c,aA)$, $(aA,aA,O,aA) \rightarrow (O,aA,O,aA) \rightarrow \dots \rightarrow (O,aA,O,aA)$.

As far as the metrical pattern is concerned, it should be mentioned that Jivani used all types of ashik verse art. However, in some pieces of poetry the indispensable for such poetry metrical pattern is violated, i. e. the pattern of the strophe and the rhyme. Otherwise stated, the number of the strophes is violated and in terms of the line, the author violated the well-defined number of caesurae (cuts) and syllables. In some poems endings are not rhymed similarly, but with partial changes. In such cases they appear as semantic repetitions and thus, reinforce the meaning and the idea of the poem.

The dissertation is completed with conclusions, which summarizes the results of the carried out work.